



VIVA^{CELL} MTS

SATURDAY
JULY 15, 2017

DAY 7

DAILY

ՕՐԱԹԵՐԹ



HISTORY IN THE PRESENT TENSE

ՆԵՐԿԱ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

INTENT TO
DESTROY - p.5
«ԲՆԱԶՆՁՄԱՆ
ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ»- էջ.5

▪ ՀԱՅՐԵՐ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ
▪ ՎԱՐՊԵՏԱՅ ԴԱՍ.
ԹՈՄ ՍԶՄՈՐԼԻ

էջ 2-3

▪ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ. ՅԱՆԱ
ՓԱՓԵՆԲՐՈՋ, ՄՈՀԱՄԱԴ
ՈՍՄՈՒԼՈՅ ԵՎ ԱՅԼԷ

էջ 4

ԶՈ ԲԵՈՒԼԻՆԳԵՐ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ էջ/p. 5 INTERVIEW

JOE BERLINGER

▪ INTERVIEWS: JANA
PAPENBROOCK, MOHAMMAD
RASOULOF, AND MORE

p. 6-7

▪ ARMENIAN SHORTS:
FAMILY AFFAIRS
▪ MASTER CLASS TOM MCSORLEY

p. 7

ՄՈՍԿՎԱ ԿԻՆՈԹԱՏՐՈՆ, ԿԱՐՄԻՐ ԴԱՆԼԻՑ
MOSCOW CINEMA, BLUE HALL

15.07

12:00 Կարմիր շրջան /նեմ.՝ ժան-Պիեռ Մելվիլ
Le Cercle Rouge /dir. Jean-Pierre Melville
Fra/Ita, 140' Lang.: French
T, 16+ Subt.: English and Armenian



14:30 Հեղափոխություն /նեմ.՝ Հյու Հադսոն
Revolution /dir. Hugh Hudson
UK, 124' Lang.: English
R, 16+ Subt.: Armenian

20:00 Քառնջնյան մտադրություն /նեմ.՝ Ջո Բերլինգեր
Intent to Destroy /dir. Joe Berlinger
USA, 115' Lang.: English
CF Subt.: Armenian
*Invitations Only 16+

ՄՈՍԿՎԱ ԿԻՆՈԹԱՏՐՈՆ, ԿԱՐՄԻՐ ԴԱՆԼԻՑ
MOSCOW CINEMA, RED HALL

20:00 Քառնջնյան մտադրություն /նեմ.՝ Ջո Բերլինգեր
Intent to Destroy /dir. Joe Berlinger
USA, 115' Lang.: English
CF Subt.: Armenian
*Invitations Only 16+



ԵՐԵՎԱՆՑԻ ԳԻՇԵՐՆԵՐ ԴՊՐՈՍՅԱՆ ԱՅՅՈՒՆԵՐՈՒՄ
YEREVAN NIGHTS AT POGHOSYAN GARDENS

21:00 Առաջատար /նեմ.՝ Սիլա Հենեսի
The Pacemaker /dir. Selah Hennessy
UK, 30' Lang.: English
BW, 12+ Subt.: Armenian
Արևածաղիկների պանդոկ /նեմ.՝ Սիլա Հենեսի
Sunflower Inn /dir. Selah Hennessy
UK, 30' Lang.: English
BW, 12+ Subt.: Armenian

ԵՐԵՎԱՆՑԻ ԳԻՇԵՐՆԵՐ ՕՊԵՐԱՅԱՆ ՀՈՂԱՐԱՎՈՒՄ
YEREVAN NIGHTS AT OPERA SQUARE

21:00 Դենիս Մուկուցե /նեմ.՝ Մարդեյ Լոշակ
Dr. Denis Mukwege /dir. Andrei Loshak
Rus, 5' Lang.: Armenian
AU, 12+ Subt.: Armenian
Ճերմակ անուշքներ /նեմ.՝ Սերգեյ Իսրայելյան
White Dreams /dir. Sergey Israelyan
Arm, 82' Lang.: Armenian
T, 12+ Subt.: Armenian

ԵՐԵՎԱՆՑԻ ԳԻՇԵՐՆԵՐ ԿԱՍԿԱԴՐՈՒՄ
YEREVAN NIGHTS AT CASCADE

21:00 Մուհամադ Դարվիշ /նեմ.՝ Մարդեյ Լոշակ
Dr. Muhammad Darwish /dir. Andrei Loshak
Rus, 5' Lang.: Armenian
AU, 12+ Subt.: Armenian
Բարև, ես եմ /նեմ.՝ Ֆրոնդե Դովլաթյան
Hello, It is Me! /dir. Frongov Dovyatyan
Arm, 82' Lang.: Armenian
T, 12+ Subt.: Armenian

ԵՐԵՎԱՆՑԻ ԳԻՇԵՐՆԵՐ «ԱՅԱՍԱՆ» Կ/Թ ԱՅՅՈՒՄ
YEREVAN NIGHTS AT HAYASTAN CINEMA GARDEN

21:00 Ֆարտուն Ադան և Իլան Էլման /նեմ.՝ Մարդեյ
Lոշակ
Fartun Adan and Ilwan Elman /dir. Andrei Loshak
Rus, 5' Lang.: Armenian
AU, 12+ Subt.: Armenian
Վեց երաժիշտ քաղաքի ֆոնին /նեմ.՝ Տատյանա
Դանիլյանց
Six Musicians and the City /dir. Tatiana Danilyants
Rus/Arm, 73' Lang.: Armenian/Russian
YP, 12+ Subt.: English

ԵՐԵՎԱՆՑԻ ԳԻՇԵՐՆԵՐ ՆԱՆՏԵՆ ԱՅՅՈՒՄ
YEREVAN NIGHTS AT NANSEN GARDEN

21:00 Ջամիլա Աֆղանի /նեմ.՝ Վարդան Հովհաննիսյան
Jamila Afghani /dir. Vardan Hovhannisyanyan
Arm, 5' Lang.: Armenian
AU, 12+ Subt.: Armenian
Խաթաբալա /նեմ.՝ Յուրի Երզնկյան
Khatabela /dir. Yuri Yeznkyan
Arm, 69' Lang.: Armenian
T, 12+ Subt.: Armenian



ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
RUSSIAN-ARMENIAN UNIVERSITY

16:00 Կարմիր խնձորներ /նեմ.՝ Գիորգի Սիխարուլիձե
Red Apples /dir. George Sikharulidze
Arm/Geo/USA, 15', AP, 16+ Lang.: English
Subt.: English



«Միանի ճամփան»

ՀԱՅՐԵՐ ՈՒ ՈՐԴԻՆՆԵՐ

«Հայկական համայնապատկեր» մրցույթի խաղարկային կարճամետրաժների բաժինը ներառում է 6 ֆիլմ, որոնց մեջ ամփոփված են զանազան երկրներից եկած հայագգի կինոգործիչների երբեմն իրարամերժ հայացքներն ընտանեկան հարաբերությունների ճգնաժամի, ավանդակների ու նորի անհամադրելիության վերաբերյալ:

սահմանին գտնվող հայկական գյուղում ապրող Սիմոնը ստիպված է երկար ճանապարհ անցնել մեռնող պապին տեսնելու համար, ով իրականում 300 մետրի վրա է ապրում, բայց սահմանից այն կողմ: Իսկ մինչ այդ միայն տեսնելու միակ ճանապարհը հեռադիտակները չկորցնելն է:

Սցենարիստ և պրոդյուսեր Օֆելյա Հարությունյանի և ռեժիսոր Գիորգի Սիխարուլիձեի «Կարմիր խնձորներ» վրաց-հայ-ամերիկյան արտադրության դրամայում նորապսակ գույցի առաջին գիշերն իր անարյուն սպանով, ու գրեթե ամբողջ գերդաստանով բռնկված այցելու միտուճը շատ հակիրճ, առանց ավելորդ դրամատուրգիական շերտմաների և զիզգագների պատկերում են ոչ միայն ավանդապատ ծնողների նախապաշարմունքները, այլև ինչպիսի ազդեցություն է այս միջադեպն ունենում երիտասարդ ընտանիքի ավագայի վրա:

Ավանդական ընտանեկան հարաբերությունների պատկեր ենք տեսնում Արջ-Ապետ Երեմյանի «Այլ ու հաց» ֆիլմ-ատակում: Աստվածաշնչյան անտառի որդու պատմությունը վերցնելով որպես հիմք՝ ռեժիսորը գործողությունները տեղափոխում է մերօրյա Հայաստան Լոռվա լեռներում գտնվող մի գյուղ, որտեղ, հեղինակի խոսքով, դեռ կենդանի է «պատվի ու հպարտության վրա հենված յուրահատուկ մի արժեքահամակարգ»:

Եթե Սիխարուլիձեի ֆիլմը նորապսակների մասին է, ապա Էրիկ Ծահինյանի «Մեռյալ քրի երեխան» դրաման տարեց ամուսինների, որտեղ Այգ-հայմերի հիվանդությամբ տառապող կինը չի կարողանում օգնություն ցուցաբերել իր յոզարանում ընկած ամուսնուն: Տրագիկոմիկ պատմությունն իր հերթին անօգնության և օգնության մասին է, որտեղ աջակցությունը կարող է հասնել շատ անպակաս:

Չրագրին ֆանտաստիկոսի և արտոբրիտական տարր է հաղորդում Կարինե Թորոսյանի կանադա-հայկական «Կատույցը վառած է, ընկեր»-ը, որտեղ գլխավոր հերոսը՝ ճարտարապետ Ֆրոնդե, չի կարող կողմնորոշվել շարունակել արդյունքում ընտանեկան թիզնեցող հետևելով ցեմենտով տարված հոր ռոմանտիկին, թե ընտրել իր սեփական ուղին: Եվ այդ հարցն այս ֆիլմերից շատերի հերոսների մտքում է: Եվ ամեն մեկն ունի իր պատասխանը: **ԳԿ**

Եթե ոչ հայկական ժողովրդական ավանդույթների, ապա որոշ չափով միասնավաճության մասին է ռեժիսոր Էդգար Բաղդասարյանի «Միանի ճամփան», որտեղ հայ-թուրքական



«Կարմիր խնձորներ»

GOLDEN APRICOT DAILY

Խմբագիրներ՝ Յուրա Բրուերեն-Հայտնեյա, Արթուր Վարդիկյան
Աշխատակազմ՝ Մաշա Կուտսիր, Հյուգո Էմերցալ, Կարեն Ավետիսյան
Տեղիեցակներ՝ Ռոգա Գրիգորյան, Գիանա Մարտիրոսյան
Լուսանկարիչ՝ Մանե Հովհաննիսյան
Սրբազորիչ՝ Կարեն Ասատրյան

Թարգմանիչներ՝ Լուսինե Հովհաննիսյան, Զարինե Մաֆարյան, Կարինե Արդյան
Գիզայերի՝ Գայանե Գրիգորյան
Հեռակա խորհրդատու՝ Պիտեր վան Բյուրեն
Տպագրված է «ՆՏ Հորինից» ՄԴԸ-ում

Editors: Joost Broeren-Huitenga & Artur Vardikyan
Staff: Hugo Emmerzael, Sasja Koetsier, Karen Avetisyan
Contributors: Roza Grigoryan, Diana Martirosyan

Photographer: Mane Hovhannisyanyan
Design: Gayane Grigoryan
Backstage General Adviser: Peter van Bueren
Printer: "NT Holding" Ltd.

«ՄԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ ՀԵՐՈՍ ԶԵՆ»

Այս տարվա վերջին վարպետաց դասը տեղի ունեցավ Երեկ, ՉԲԸՄ դահլիճում, և այն վարպետ Օտտավայի Կանադական կինոյի ինստիտուտի գործադիր տնօրեն, կինոգետ Թոմ Մքարթլին: Այս տարվա խաղարկային մրցույթի ժյուրիի անդամն իր վարպետաց դասի ընթացքում խոսեց ժամանակակից կանադական կինոյի մասին՝ անդրադառնալով նաև նրա պատմությանն ու անցած ուղուն:



«Մեր կերպերի տեր ու տիրակալներն ամերիկյան կինոներն են եղել», - այսպիսի խոստովանությամբ սկսեց իր խոսքը Մքարթլին: «Հինա էլ է այդպես: Կանադական կինոթատրոններում 97 տակառ հոլիվուդյան ֆիլմերն են, և միայն 3 տուկոս են կանադական: Այսինքն՝ Կանադան որդեկան է ամերիկյան արտադրությանը: Կանադական կինոն անտեսանելի է: Մեր երիտասարդներն ամերիկյան ֆիլմեր են դիտում: Եթեբայցում են, որ ձեզ մտա էլ նույնն է»:

Կինոքննադատը փաստեց, որ իր երկրում չեն եղել ու չկան կինոնատուղիներ. ամեն ինչ արվում է անհատների կողմից: Ավելին՝ ըստ Մքարթլի՝ կանադացիների մեծ մասը կանադական ֆիլմ տեսած չկա, չնայած այդ առումով արդեն կան դրական որոշակի տեղաշարժեր: «Վերին 30 տարիներից Կանադան միջազգային ճանաչում ունեցող կինոգործիչներ է տվել աշխարհին, ովքեր մասնակցել և մասնակցում են փառատոների, արժանանում պարգևների և նկարահանում փորձարարական ֆիլմեր»:


Մքարթլին նշեց, որ եթե ամերիկյան կինոն, որպես կանոն, մարդկանց հաջողությունների

մասին է, ապա կանադականի դեպքում իրավիճակը փոքր-ինչ այլ է. «Մեր կինոն լի է ընկնկամ պարավոլոններով, մարդկանցով, ովքեր չեն կարողանում հարթահարկ մարտահրավերները: Չգիտեմ՝ կարելի է մեր հերոսներին «հերոս» անվանել, թե ոչ»: Կինոքննադատը վստահ է կանադացիները հակված են հարմարվել իրավիճակին, ոչ թե հաղթահարել այն: Եվ հենց սա է Կանադայի և ԱՄՆ-ի տարբերությունը: «Մեր ֆիլմերից շատերի հերոսներն ի գորտ չեն իրավիճակը կառավարել ի տարբերություն հոլիվուդյան հերոսների: Դատմությունը հաճախ անավարտ է կամ վատ ավարտ է ունենում», - սուսց կինոքննադատն ու իր վարպետաց դասին ցուցադրեց հատվածներ կանադական ֆիլմերից, որոնց թվում էին Դոն Մաքելարի «Անցյալ գիշերը» (1998), Դոնալդ Շերիֆի «Ճամփի վրա»-ն (1970), Դեյվ Քրոններերգի «Վիդեոդոլմեր» (1983), Քաավլե Դոլանի «Մայրիկը» (2014), Ատոմ Էզոյանի «Բարեկամները» (1984):

Ի դեպ, Մքարթլին բազմաթիվ հրապարակումներ ունի կանադական և միջազգային կինոյի վերաբերյալ, հեղինակել է գրքի մեծաթյան մի աշխատություն Ատոմ Էզոյանի «Ապահովագրական գործակալը» (1991) ֆիլմի մասին: Կինոգետը բարձր է գնահատում Էզոյանի արվեստը. «Էզոյանն այն ռեժիսորներից էր, ով վերաբացահայտեց Կանադան և կանադական պատմություններ պատմել աշխարհին»:

Կինոքննադատը հետևյալ կերպ ամփոփեց կանադական կինոյի մասին իր դասախոսությունը. «Կանադական ռեժիսորները միշտ փորձում են իրենց պատմությունները պատմել նոր՝ փորձառարկական ոճով: Ավանդույթներից խուսափել իրենց առանձնահատկությունն է»: **Ռ.Գ.**

Աշխատարան. Ռոջեր Կոսս



Արգենտինացի կինոքննադատ Ռոջեր Կոսսն, ով համակարգում էր այս տարվա վարպետաց դասերի մի մասը, այսօր՝ ժամը 15:00-ին, կամուրջի շրջանում կանադացիների շարքն իր «Նաուտիկ հայացք. մասնագիտության հնարավոր ուղիները» քննադատություն, կենսագրություն և գեղագիտություն՝ աշխատարանով: Աշխատարանին կարելի է մասնակցել միայն գրանցվելով: Գրանցման հայտը կարելի է գտնել «Ոսկե ծիրանի» Ֆեյսբուքյան էջում:

Անտոն Դոլինը՝ Ջարմուչի մասին

Երեկ «ԼոՖտում» իր վարած դասախոսությունից հետո ռուս կինոքննադատ Անտոն Դոլինն այսօր՝ 14:00-17:00-ին, «Ներտրից» գրախոսութան սրահում (Արվարձան 20) կենդանաբան իր նոր գիրքը՝ «Ջիմ Ջարմուչ. պոեզիա և երաժշտություն»:

Փակման ժամը

Նախքան փառատոնը փակող «Բնացնեման մատուցությունը» ֆիլմի ցուցադրությունը 19:00-ին, «Մոսկվա» կ/թ Կարմիր դահլիճում տեղի կունենա փակման հանդիսավոր արարությունը, որի ընթացքում պարզ կդառան մրցույթային ծրագրերի հաղթողների անունները: Օրաբերքի վաղվա համարում կարող եք ընթերցել հաղթող ֆիլմերի մասին, որոնց մեծ մասը կցուցադրվի հուլիսի 16-ին:

Գիշերային կյանք

Երբ հայտնի լինեն հաղթողների անունները, կգա փառատոնի ամփոփիչ խնջույքի ժամը: «Միքսանդր խնջույք» տրամաբանական անունը կրող մրցույթում տեղի կունենա «Process» փաբում (Մարյան 1ա), 23:30-ին:

Ժյուրիների զեկույցը

Փառատոնի տնօրեն Հարություն Խաչատրյանը և այս տարվա ժյուրիները կհիմնավորեն իրենց որոշումները վաղը՝ կեսօրին, «Գրանդ հոթել Երևան»-ի Վիվալդի սրահում:

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄՇՏԱՊԵՍ ԻՄ ԿՅՈՒՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՍԻ Է ԵՂԵԼ...»

Տառայան Դանիլյանցի «Վեց երաժիշտ քաղաքի ֆոնին» ֆիլմը, որը փառատոնի ընթացքում իր վերջին՝ հինգերորդ ցուցադրությունը կունենա այս Երեկ, հանդիսականին ճամփորդության է տանում Երևանի երաժշտական մշակույթի ու պատմության, ինչպես նաև հերոսների հայացքների ու փորձառության օբյեկտիվի միջով:

ձեռք բերել այստեղ: Այս ֆիլմը քաղաքի, հերոսների ու երաժշտության հետ անցկացրած իմ օրերի արդյունքն է»:

Երաժշտությունը շատ կարևոր է Դանիլյանցի համար, քանի որ նա վեց տարեկանից սկսել է երաժշտության դասեր առնել: «Ծնունդից ուղում էին, որ ես մենակատար դաճակահար լինեմ, բայց երբ ես տասնիննից տարեկան էի, որոշեցի, որ չեմ ուզում պրոֆեսիոնալ երաժիշտ դառնալ: Մակայն երաժշտությունը մնաց որպես կյանքիս անհրաժեշտ մաս»:

«Վեց երաժիշտ քաղաքի ֆոնին» ֆիլմի գաղափարը ծագեց տասը տարի առաջ. «Պուլ-լավոկ» ջազ սրահում, երբ ռեժիսորն այնտեղ լսեց երևանցի հայտնի երգիչ Ֆորչի կատարումը: «Դա մի շատ ցուրտ, գորշ դեկտեմբերյան օր էր, բայց հենց մտա ներս, տարաբան», - հիշում է Տառայան: Այդպես հետ հանդիպումների շնորհիվ՝ Ֆորչի մասին կարճատևորապես ֆիլմի սկզբնական գաղափարը վերածվեց Երևանի մասին ֆիլմի մանկարի, որում քաղաքը պատկերանում է իր ամենասիրված մի քանի երաժիշտ կատարողների աչքերով: «Ես խնդրեցի, որպեսզի նրանք



ինձ տանեն իրենց սիրած վայրերը. այդ վայրերն ու շինությունները կարևոր են քաղաքի պատմության, բայց նաև՝ անձամբ նրանց համար»:

«Վեց երաժիշտ քաղաքի ֆոնին», (Տառայան Դանիլյանց, Ռուսաստան/Չայաստան, 2016), 15.07՝ 21:00 - «Չայաստան» կ/թ այգի

Փանգֆի հիմնադիր հայրերը

«Գիմմի դենջըր» (Ջիմ Ջարմուչ, ԱՄՆ, 2016), Երևանյան արժամիերա, 16.07՝ 21:00 - «Մոսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ

Դեր Սթրոյիզի իր կարճատև գոյության ընթացքում (1967-1973) թեև ընդամենը երեք կոնցերտներ և առումով ձայնագրված այրում է թողարկել, սակայն բեմոյի երաժշտական ազդեցությունը հսկայական էր: Կիթառահար Էջոն Լոբայրյանի վայրի կենդանավոր և լամբի առաջատար Բոգի Փոփի առհասկառոտ տեղադրված բեմոյը ոգեշնչեց 1970-1980-ականների «Փանք» շարժումը, թեև այդ ժամանակ նրանք արդեն բեմում չէին, որ քաղեին իրենց ցանձ սերմերի պարզեցած պտուղները:

Ռեժիսոր Ջիմ Ջարմուչը հենց Դեր Սթրոյիզի կողմից հանդիսատեսին մատուցվող հարստ պատմությունը կապում է արխիվային հարցազրույցների և բեմոյի՝ դեռևս կենդանի անդամների նոր գոյացումների հետ: Ինչպես և սպասելի էր, կենդանավորները տեղում բեմոյի առաջատարն է (այս պահին բեմոյի սկզբնական կազմի միակ ուղջ



մնացած անդամը)՝ Ջիմ Օստրեբերգը, ով առավել հայտնի է Բոգի Փոփի բեմական անունով: Ջարմուչին հաջողվում է ստեղծել բեմոյի պատմության մի գոյնգոյն դիմանկար: Ռեժիսորը

սկսում է վաղ շրջանից, երբ «Դեր փսիխոլոգիկ Սթրոյիզ» անունը կրող խումբը 1960-ականների վերջին շարժվում էր այնպիսի բեմոյի հետքերով, ինչպիսին էր Դեր ՄԸՏ-ը: Այնուհետև սկսվում

է մի ռոք հերթաթ մեծերի համար. վաղ հասած հաջողությանը հաջորդում է արագ անկումը, որի պատճառը հոշակի ստորջրյա խոթերն ու թմրադեղերն էին: Այնուհետև՝ տասնամյակներ անց, երբ բեմոյի ոճն ու պատկերը տարածում գտան, սակայն լամբի անդամներն արդեն գոյություն էին բարձր տալիս, հանկարծ 2000-ականների սկզբին մի անսպասելի վերածնունդ սկսվեց:

Պատմություններն ու դեպքերը, որոնց մասին պատմում են բեմոյի անդամները, ձևավորված են արխիվային նյութերի հարստ ընթացքով: Ֆիլմի որոնաշարը ձևավորված է հազվագյուտ լուսանկարներով ու համերգային տեսագրություններով՝ թե՛ վաղ շրջանից, թե՛ վերջերս տեղի ունեցած վերածնունդի օրերից: Բայց նրա միակ ու արյունավեղ կատարը՝ ֆիլմի հետ արտարկա կերպով կապված պատկերների ամբողջատ հոսքն է՝ հստակաճանաչ ֆիլմերից և հետախույզություններից, թռչկոտու ձևագիր տեսքեր և խառը, մոտավոր անիմացիայով կարծրի շարքեր, որոնք պատկերում են ժապավենի վրա չգրանցված վայրի արկածներն ու ձայնադրությունները: Դրանք տեղի ունենում են հավերժացնել են, որոնք բեմոյի խաղաղար և անարխիստ ոգին են հաղորդում ֆիլմին, որն, ըստ Լոբայան, երկրպագուի գրած սիրային մի նամակ է Դեր Սթրոյիզին: **ՅԲԸ**

«ԻՆՁ ԶԱՐԿԱՅՐԵՑ ՆՐԱՆՑ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ»

Այս տարվա Վավերագրական մրցույթին մասնակցող գերմանացի ռեժիսոր Յանա Փափենբրոքը իր ֆիլմում քննում է երեք համբուրգցի նկարիչների աշխատանքը, կյանքը ու մտքերը՝ ստեղծելով աշխույժ մի դիմանկար, որը բանաստեղծական է թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ:



«Նրանք այնքան ազատ են, որ չունեն կանխա-կալ մտքեր, թե ինչպիսին պիտի լինի իրենց աշխատանքը»,- իր ֆիլմի հերոսների՝ Հորսթի, Բեռնհարդի ու Միխայելի մասին ասում է Յանա Փափենբրոքը: «Աշխատանք» ասելով Յանան նկատի ունի նրանց ստեղծած արվեստը Համբուրգի մի արվեստանոցում, որը նրանք կիսում են 27 նկարիչների հետ: Հորսթն ու Բեռնհարդը հայտնաբերում վայելող նկարիչներ են, իսկ Միխայելը հյուսիսի հնուտ վարպետ է և թեկից կարող է ինչ ասես ստանալ:

Փափենբրոքի արած դիմանկարում երևում է, թե հեղինակին հատկապես ինչն է դուր գալիս իր հերոսների՝ արվեստի հանդեպ ունեցած մտեցման մեջ. նա թույլ է տալիս, որ այս արվեստագետների հետաքրքրությունները, գործերն ու ընկալումը ձևավորեն ֆիլմի պատմությունն ու ռեժիսորի մտքերը: Նրանք փորք-ինչ արտասովոր աշխարհայացքը (մի բան, որ մշտապես հույս ունենր տեսնել արվեստագետի մտքերում) մասամբ արդյունք է բնածին մտավոր խանգարման: Սակայն Փափենբրոքը չի նայում դրան որպես հաշման-

դանության, այլ հաջողեցնում է բացահայտել դրանց ներքին բնույթը: «Հաշմանդանության մասին ֆիլմերում սովորաբար կա տարբերակում՝ առողջ և ինքնիշխան ռեժիսորի ու խանգարում ունեցողի միջև»,- նշում է Փափենբրոքը: «Ռեժիսորները հավզվաղեայ են թույլ տալիս, որ հերոսների մտածելակերպն ու աշխարհայացքն

ազդեն իրենց մտապատկերի վրա: Մենք ուզում էինք, որ ֆիլմը լինի հասարակական-քաղաքական, ինչպես նաև՝ ընդգրկուն»:

Հենց դա էլ մղեց Փափենբրոքին իր հերոսների հետ համատեղ մշակել սցենարը: «Ես նրանց հարցի, թե ինչ կուզեցե՞նք անել, և նրանք անմիջապես տարատեսակ մտքեր սկսեցին

հայտնել: Ես իմ հերոսներին ընտրեցի արվեստանոցում տեսալսելիով պատվելով ու տեսնելով, թե ով է անկաշկանդը: Այդ երեքը միասին եկան ու ինձ հրավիրեցին միասին այցելել իրենց սիրելի վայրերն ու կյանքին համաբալլ՝ հետևել իրենց: Նրանք միմյանց գերազանց հասկանում էին, քանի որ, իրոք, լավ ընկերներ են: Ի՞նձ զարմացրեց այն, որ նրանք, կրթություն չունենալով, այդքան իմաստուն են: Նրանք շատ իրատեսական ու փիլիսոփայական հայացքներ ունեն կյանքում ու հասարակության մեջ իրենց հնարավորությունների վերաբերյալ: Ավելին՝ նրանք արված ամեն մի հնարավորություն ու րախտությամբ են ընդունում: Սա մի իմաստություն է, որ նրանք զարգացրել են տասնպատկերի ու մեկուսացման միջով անցնելով»:

Փափենբրոքը յուրային է գեղարվեստի աշխարհում, քանի որ աշխատել է վիդեո-արտի ժանրում, և արդեն տարբ տարբ ավելի՛ նաև գրող է ու ռեժիսոր: Նա խոստովանում է, որ կուզե՞նար ավելի լայնորեն տարածված տեսնել այն նրբակատարությունն ու խմանքը, որով այս արվեստանոցի անդամներն են միմյանց վերաբերվում: «Նրանք մեկը մյուսին խրախուսում, գորակցում են և հետաքրքրվում են միմյանց աշխատանքով: Այս արվեստանոցը կոմունիստական մի ուսուցիչ է, ամբողջ եկամուտը կիսվում է, նույնիսկ եթե մեկ գործերն ավելի են վաճառվում, քան մյուսներից: Իհարկե, այս ամենը հնարավոր է, որովհետև նրանք պետության օտարակալությունն ունեն: Ի տարբերություն դրան՝ ասում չունկայում արվեստը չափազանց մրցակցային է ու ետակներում: Ես կարտո եմ ճանաչում համերաշխության ու համայնքի»:

«ՊԱՏՎՈՎԴ ԵՄ ՎՃԱՐՈՒՄ»

2013 թ.-ի «Ձեռագրերը չեն այրվում» ֆիլմի Կաննի պրեմիերայից ի վեր կինոշրջանակներից բացակայող Մոհամադ Ռասուլֆին այժմ երևանում է՝ ներկայացնելու համար իր նոր՝ «Անկաշառը» ֆիլմը: «Ինձ ձեռքակաշառն, երբ 2013-ին Իրան վերադարձա», - պարզաբանում է Ռասուլֆը: Սա է իրականությունը նաև բազմաթիվ այլ իրանցի կինոգործիչների համար:



Իր հայրենակիցներ Ազար Ֆարիադին և Ջաֆար Փանահիին նման Ռասուլֆը միջազգային կինոփառատոներում փառքի է արժանացել («Անկաշառ» այս տարի ստացել է Կաննի «Հատուկ հայացք» հեղինակավոր մրցանակը), սակայն հետապնդվում է իր հայրենիքում, որտեղ նրա ֆիլմերը երբեք չեն ցուցադրվում մեծ կրթահիմն: Փաստն այն է, որ Ռասուլֆին իր վերջերս թողարկած ֆիլմերը ստիպված է եղել գաղտնի նկարահանել: «Դա է նաև պատճառը, որ նկարահանումները երկար տևեցին. պիտի բարձր մեկնալիս...»: «Վստահորեն կարելի է ասել, որ Իրանի պաշտոնատարները լավ աչքով չեն նայում Ռասուլֆի ձեռնարկած՝ Իրանի հասարակության հյուսվածքի մանրակրկիտ ուսումնասիրությանը: «Երբ ես 2013 թ.-ին վերադարձա Կաննից, որոշ ազատ ժամանակ ունեի, որն անցկացրի ինձ շրջապատող հասարակությունն ուսումնասիրելով», - բացատրում է Ռասուլֆը՝ պատասխանելով այն հարցին, թե որտեղից է ծագել «Անկաշառը» ֆիլմի սկիզբը: «Ինձ ամենից շատ ցնցողը այդ համատարած կաշառակերությունն էր»:

Ազատության ու կաշառակերության մասին այս հեքիաթի ներշնչանքը եղել է շուրջ 20 տարի առաջ իր կյանքում տեղի ունեցած մի իրադարձություն: Ռասուլֆը նկարահանում էր անում գովազդային այն ընկերության համար, որտեղ նա այդ տարիներին աշխատում էր. նրան կանգնեցնում է Իրանի ոստիկանությունը: «Ես շատ հոգեհոգ էի, որովհետև ամբողջ օրը նկարահանման էի. ուզում էի հասնել գրասենյակ ու կարևոր այդ գործը շարունակել, բայց ոստիկանությունը ոչ մի կերպ թույլ չէր տալիս»: Անզամ եթե նրա բոլոր փաստաթղթերը կարգին էին, Ռասուլֆը կարող էր գնալ միայն, երբ վճարել ոստիկանության սպանելին: «Նրանց առաջարկն ինձ համար այնքան էլ զարմանալի չէր. ես ուղղակի չգիտեի, թե այդ վիճակում ինչ է պետք անել»:

«Անկաշառը» ձևաբանությունն է իր ընտանիքի բարդությունների միջոցով ցույց է տալիս, թե որպես աշխարհացի է կաշառակերությունն այս համակարգում: Ինչպես ֆիլմի կերպարներին մեկն է ասում. «Այս երկրում ուր կամ ճնշում ես, կամ՝ ճնշվում ես: Ռասուլֆը նույնպես իր կյանքում զգացել է կաշառակերության ներգործությունը: «Անզամ եթե չես ուզում, այն թե՛ կարող ես կտաս պահի: Անզամ ես չեմ սիրում կարել, սակայն ստիպված եմ կեղծ սցենարներով ներկայացնել, որպեսզի հաստատում ստանամ իմ իրական՝ «ամօրինական» սցենարներով ֆիլմ նկարելու համար: Գրաքննությունն ինքնին համակարգի մաս է կազմում: Եվ թե՛ ստիպում է այդ քայլերին դիմել»:

Ռասուլֆը փորձեց անել այն, ինչ ճշմարիտ էր: Իր գրասենյակում իրեն ուղեկցող սպային վճարելուց առաջ նա արագությամբ պատճենահանեց թղթադրամները: Ավելի ուշ նա դրանք ոստիկանության կապիտանին ներկայացրեց բողոքի դիմում գրելիս: Ռասուլֆը հիշում է. «Կապիտանը որոշ ժամանակ ինձ նայեց, ապա պատճենները որեք իր դարակի մեջ: Հայտարար օրը ճաշից հետո նրանք ինձ ձերբակալեցին: Ֆիլմի սցենարը գրելիս այս հուշը անբերկառ իմ մտքում էր: Այն ցույց է տալիս համակարգի բարդությունները: Երբ ուզում ես դիմակայել նմանատիպ կաշառակերությանը, ապա պիտի վճարես ոչ միայն ամեն ինչ, այլև անձնական, այլև քո պատվով ու ինքնուրույնությամբ»: ՀԷ

«ՄԵՆՔ ՈՒԶՈՒՄ ԷԻՆՔ ՊԱՏՄԵԼ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՄԻ ՊԱՍՏՈՒԹՅՈՒՆ»

Չեյս և հուլանդացի ռեժիսորներ Պետր Լոմն ու Կորինե վան Էգեթաթը նորից մասնակցում են «Ոսկե ծիրան» կինոփառատոնին այս անգամ իրենց վերջին՝ «Բիրմայական պատմությունների ժողովածու» ֆիլմով, որը Բիրմայի (Մյանմար) հասարակությունում պոեզիայի կենտրոնական դերակատարման մասին է: «Քանի որ ֆիլմը պոեզիայի մասին է, պատկերները պետք է նույնպես գեղեցիկ լինեն, որքան բառերը»:



Ճիշտ է, «Բիրմայի պատմությունների ժողովածու» ֆիլմը նկարահանվում էր 2016-ին Բիրմայի առաջին ժողովրդավարական ընտրությունների նախապատրաստման ժամանակ, սակայն ֆիլմի կենտրոնում ամենին էլ քաղաքականությունը չէ: «Մենք ուզում էինք, որ այն լինի տեսարժան ու գեղեցիկ», - ասում է Լոմնը: «Ուզում էինք պատմել մի հավերժական պատմություն: Իսկ եթե միայն քաղաքականության վրա ես կենտրոնանում, բայց ի՞նչ կարող մնան արդյունքի հասնելը»: Ըստ Լոմնի՝ Մյանմարում քաղաքականության մասին ֆիլմ նկարահանելն էլ պետք է բավականին դժվար լինի: Որպես օտարերկրացիներ՝ մենք իրականում չէինք կարող նկարահանել քաղաքական թեմաներ կամ էլ ուսանողական բողոքի ցույցերը: Բայց մենք ամեն դեպքում մտադիր էլ չէինք դա անել»:

Ֆիլմի բանաստեղծներից ամենանշանավորը Մաուն Անն Փոլին էր, ով իր հայրենիքում ժողովրդական բանաստեղծ է համարվում: Բացի նրա պոեզիայից, ֆիլմին որոշակի ուղղություն է հաղորդել նաև նրա կյանքի գարնանային պատմությունը: «Մենք նկարահանել էինք 200 ժամ», - ասում է Լոմնը, - բայց խնդիրն այն էր, թե ինչպես պետք է դա պատմության վերածել: Մենք ծանոթացել էինք Մաուն Անն Փոլինի հետ՝ Մյանմարի «Human Rights Human Dignity» կինոփառատոնի կազմակերպիչների միջոցով, որին մասնակցել էինք 2013-ին մեր «Հեռու դեպի հրապարակ» ֆիլմով: Նրան հանդիպելը մի տեսակի հրաշք էր ճնման, նա այնպիսի անձնավորություն է, որը մեծ ընծա է ռեժիսորի համար: Բայց մենք չէինք ուզում ֆիլմ ստեղծել միայն նրա ու նրա կնոջ մասին. նման ֆիլմը չափից պայմանական ու չափից նեղ կտասպիլի: Միայն կրճատված գույզը դարձավ պատմության առանցքը, տեսալսելիների ետևում մնացած գույզի կյանքն էլ իր զարգացումն ունեցավ: «Պաշտոնապես Պետրն է ռեժիսորը, իսկ ես արդյունքներն եմ, բայց մենք ամուսնացած եք, այնպես որ ամեն ինչ մի տեսակ իրար է խառնվել», - ասում է Վան Էգեթաթը: «Մենք սկսեցինք միասին գրել, ու մեզ դուր եկավ միասին մոնտաժելը: Ես կարծում եմ՝ մենք ստեղծագործական տեսակետից լավ թիմ ենք: Մենք շատ տարբեր ենք, բայց հարգում ենք միմյանց տեսակետներն ու ճաշակը»: ՅԲԸ

Փոխկազմակերպիչները է կարևոր Մյանմարում այդ երկրի բնակիչների պոեզիայի միջոցով: Լոմնի ու Վան Էգեթաթին հաջողվել է զգալ ու փոխանցել երկրի ոգին՝ խոստովանելով Էկզոտիկությունը, որը միշտ էլ սպառնում է նման ֆիլմերին: «Ես միշտ ստեղծել եմ ֆիլմեր այն երկրներում, որոնց լեզուները չգիտեմ: Թեև ես մեկն եմ, ով չի հավատում, որ կան յուրայիններ ու օտարներ: Գուցե ես միայն միտնեցնում է կինոյին, բայց ես, իրոք, հավատում եմ կոսմոպոլիտանիզմին», - հավելում է Վան Էգեթաթը: «Գործնական իմաստով խնդիրը ճիշտ տեղացի գործընդեր գտնելն է: Մենք մի քանի ամիս էինք ծախսել՝ փորձելով գտնել մեզանք մեկին, ու վերջապես որոշեցինք խնդրել անդալցի մի քանի հարգված բանաստեղծների,

Որքանով էիք ծանոթ Եղեռնի թեմային մինչև «Բնաջնջման մտադրություն» ֆիլմը սկսելը:

Միշտ էլ իմացել եմ Եղեռնի մասին, ու ինձ միշտ հետաքրքրել է այն հանգամանքը, որ այն մինչ օրս վիճարկված դեպք է, այնինչ վիճարկելու առհասարակ ոչինչ չկա: Դա սարսափելի բարբարոսություն էր, որը պետք է դատապարտվի: Այդուամենայնիվ, ես երբեք չեմ մտածել դրա մասին ֆիլմ ստեղծել, քանի որ պատմական ֆիլմերի ռեժիսոր չեմ: Ես ավելի շատ սինեմա վերիստե ժանրի ռեժիսոր եմ, որը այժմյան պատմությանն է անդրադարձնում:

Ինչպե՞ս «Խոստումը» Ձեզ մտափոխեց:
Երբ լսեցի «Խոստում» ֆիլմի նկարահանումների մասին, մտածեցի, որ ես թերևս կարող եմ ինչ-որ բան ավելացնել այդ ընդամենըներին ու ստեղծել ֆիլմ, որն ավելի շատ այն մասին է, թե ինչպես եմ ես սիրում ֆիլմեր ստեղծել: «Խոստում» ֆիլմի արտադրությունն այն թեման էր, որն ինձ ամբողջապես էր ձեռնապահում: Այդ պատմության հետ կապելու համար: Այս թեմայով խաղաղության ֆիլմի ստեղծումն իմ ֆիլմում ընդգրկվել էր մեծապես տեսակետից ինձ հետաքրքիր ու ազդեցիկ էր թվում: Ունեմ այն ընկալում եմ որպես պարզապես ֆիլմ ֆիլմի մասին, բայց, ըստ իս, դա միայն մտնուցում է: Ես ուզում եմ չափանախակվել դրանում ու նոր շունչ հաղորդել այդ ժանրին: Ի՞նչ հետաքրքրում է ոչ միայն Եղեռնը, այլև 100 տարվա ժխտումը, որը հաջորդել է դրան ու այդ ժխտման հետևանքները:

Հետաքրքիր է, որ 100 տարի է պահանջվել, որպեսզի այս պատմությունը հայտնվի հոլիվուդյան կինոյում:
Գիտե՞ք, մինչ այդ Թուրքիան միջամտել է ամերիկյան կինոարտադրությանը, ու դրա հետևանքով ոչ ոք չի համարձակվել պատմել այդ մասին կինոյում: Հիմա էլ Հոլիվուդում ոչ ոք չի համարձակվում հոժարաբար անդրադարձնել այդ թեմային: «Խոստումը» անկասկա ֆինանսավորում ունի: Չնայած դերասանական կազմում բազմաթիվ հոլիվուդյան դերասանների առկայությանը՝ այն, այնուամենայնիվ, անկասկա ֆիլմ է, որը ֆինանսավորվել է հայ գործարարի կողմից: Անձն դեպքում այն փաստը, որ այս ֆիլմը նկարվել է հոլիվուդյան տաղանդների մասնակցությամբ, կարծում եմ՝ շատ նշանակալի է:

Ինչը Ձեզ ամենից շատ գարնացրեց, երբ ուսումնասիրում էիք թեման:

Ես Եղեռնի մասին միայն հիմնական փաստերը գիտեի: Ես ընդամենը գիտեի, թե ինչ ուժեղ է եղել ժխտողականության արշավը վերջին հարյուրամյակում: Ի՞նչ հայ ընկերությունից մի քանիսին գուցե դուր չգա իմ աասծը, բայց ես ֆիլմում ընդգրկվել եմ ցեղասպանությունը ժխտողներից մի քանիսին, որովհետև ուզում էի հասկանալ ժխտման մեխանիզմը: Շատ գիտնականներ ձեզ կասեն, որ դուք չպետք է երեք տրամադրեր նրանց, ովքեր ժխտում են Հոլոքոստը, քանի որ այդ ձևով դուք առան օրինակաբանում եմ նրանց տեսակետը: Այսինքն՝ մարդիկ մաս կապվածի տակ են դնում ժխտման տեսակետը ֆիլմում ներառելու իմ որոշումը: Ինչու, ես գզում էի, որ այդ ձայները ներառվել շատ կարևոր է, քանի որ դու պետք է հասկանաս ժխտման մեխանիզմը, որպեսզի հասկանաս, թե որքանով է այն արդյունավետ:

Ինչպե՞ս եք կապ հաստատել այդ մարդկանց հետ, երբ նրանք ձեռ տեսախցիկի առջև էին:

Ես ընդունում եմ նրանց, թույլ էի տալիս, որ նրանք բարձրաձայն իրենց տեսախցիկները: Ես կարծում եմ, որ նրանք նույնպես վերջին հարյուրամյակում իրականացված թուրքական բարոկոստիան գոհերն են: Իրականում բազմաթիվ մարդիկ չեն հավատում, որ դա ցեղասպանություն է եղել, ու որոշ հայեր էլ կարծում են, որ յուրաքանչյուրն, ով ֆիլմում ժխտում է Եղեռնը, բողոքական պատճառ ունի դա անելու համար: Ըստ իս՝ ամեն ինչ շատ ավելի բարդ է: Ժխտման արշավը շատ արդյունավետ է եղել, կասկածներ է սերմանել ու համոզել, որ այդ բոլոր հայերն ընդամենը պատերազմի զոհեր են եղել, բայց Եղեռնը հետազոտողների մեծամասնությունը համոզված է, որ դա, իրոք, ցեղասպանություն է եղել:

Իսկ Դոնը եք նույնատիպ ճնշում զգացել:

Երբ ես նկարահանում էի «Խոստումը» արտադրության ընթացքը, ես այդ մասին չէի քարձակում: Ես չէի ուզում որևէ միջամտություն, մինչ նկարահանում էի ֆիլմի այդ հատվածը: Հենց նյուրթ Նկարահանվել, ես մեծ ջանքեր էի գործադրում, որ թուրք պաշտոնյաներն իմ հետևեցին զանգ: Ի գարնանս ինձ՝ ես չեմ ունեցել բախումներ ի տարբերություն դերասան Դանիել Խիմենեզ Կաչոյի: Ինչպես նրա հետ կապվել էր ու փորձել ճնշել: Ես երբևէ չեմ բախվել այդ տեսակ ճնշման: Ընդհակառակը, ես, իրոք, մեծ ջանքեր եմ գործադրել, որպեսզի որևէ մեկն ինձ հարցազրույց տա, բայց բոլորը մերժում էին: Նրանք ընդամենն ինձ հրավիրում էին Թուրքիա, որպեսզի ես խոսեմ ԱԿՆ պաշտոնյաների հետ, բայց ինձ վստահ էր թվում Թուրքիա գնալ ու պաշտոնյան կիսբողոքներ ստանալը, եթե ինձ արգելված էր նկարահանել դա: ՀԷ

«Բնաջնջման մտադրություն» (Ջո Բեռլինգեր, ԱՄՆ, 2017), Փակման ֆիլմ, 16.07՝ 22.00 - «Մուսկվա» կ/թ, Կապույտ դահլիճ, Կարմիր դահլիճ (միայն հրավիրառուներով)

ՋՈ ԲԵՐԼԻՆԳԵՐ

«Մետալիկա», յուրատեսակ հրեշ» ֆիլմով, որը ամերիկյան Մետալիկա ռոք խմբի դիմանկարն էր, Ջո Բեռլինգերը նոր շունչ հաղորդեց երաժշտական վավերագրական ժանրին: Ֆիլմը ցույց է տալիս առասպելական երաժիշտների պայքարն իրենց անձնական հրեշների դեմ: Բեռլինգերն այնքան էր մտերմացել իր ֆիլմի հերոսներին, որ կարողացել էր բացահայտել նրանց անկեղծ ու չգոված զգացմունքները՝ լույս սփռելով այն ծայրահեղ ճնշման վրա, որը նրանք զգացել են իրենց ստեղծագործական ուղու վերելքի ժամանակ:

Ամերիկյան հեռուստատեսության համար բազմաթիվ վավերագրական ֆիլմեր ու հաղորդումներ պարտաստեղյուց հեռու Բեռլինգերը վերադառնում է «Կոլիսների հետևը» ժանրին, չնայած նրա վերջին «Բնաջնջման մտադրություն» ֆիլմի թեման շատ ավելի ծանրակշիռ է: Ֆիլմում ներկայացված է մեծածախ ու բազմաթիվ մեծանուն աստղերի մասնակցությամբ «Խոստում» ամերիկյան կինոնկարի նկարահանումների ընթացքը: Վերջինս պատմում է Հայոց ցեղասպանության մասին: «Բնաջնջման մտադրությունը» «Խոստում»-ի արտադրությունը տեղադրում է ավելի ընդարձակ համատեքստի մեջ. կան մարդիկ, ովքեր պայքարում են, որպեսզի Հայոց ցեղասպանության պատմությունը բարձրաձայնվի, ու կան մարդիկ, ովքեր փորձում են թույլ չտալ, որ այդ պատմությունն անգամ հիշատակվի:



JOE BERLINGER

With *Metallica: Some Kind of Monster* (2004), a portrait of the American rock band at a moment of crisis, Joe Berlinger reinvented the genre of the fly-on-the-wall music documentary. The revealing film shows the iconic musicians battling their personal demons. Berlinger gets so close to his subjects that they give him all their raw and unfiltered emotions, shedding light on the extreme pressure they felt to excel in their creative process.

